



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«ԱՐՄԵՆԻԱ» ԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ Ժ/Պ

Վ. ՄԻՆԱՅԱՆ
« 24 » 04 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 32

Ձեռնարկողը՝

«ՄԻԿՄԵՏԱԼ» ՓԲԸ

Ք. Երևան, Մասիսի 99

Գործունեությունը՝

**Ջրաբերի լիթոիդային պեմզաների Լանջ տեղամասում
օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի
վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**
«Կոտայքի մարզ»

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Վ. Սահակյան

Վ. Սահակյան

թիվ ԲՓ 32

< 13 > 04 2018թ.

« Կոտայքի մարզի Ջրաբերի լիթոիդային պեմզաների Լանջ տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն »

Ձեռնարկող՝
Փաստաթղթի տեսակը՝

«Միկմետալ» ՓԲԸ
Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն
/Ա կատեգորիա/

Տեղադրման վայրը՝

« Կոտայքի մարզ, Բյուրեղավան համայնքի
Ջրաբեր գյուղ

Ջրաբերի լիթոիդային պեմզաների հանքավայրի Լանջ տեղամասը գտնվում է « Կոտայքի մարզում, Երևանից դեպի հյուսիս արևելք 25 կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 3.3հա տարածք: Հանքավայրի անմիջական հարևանությամբ է անցնում Երևան-Սևան ավտոմայրուղին և Երևան-Վարդենիս երկաթուղին: Հանքավայրի բացարձակ բարձրությունները տատանվում են 1670-1730 մետրերի միջև: Տեղամասը ներկայացված է մեղմաթեք անկումով միասնական շերտածն հաստվածք:

Ջրաբերի լիթոիդային պեմզաների հանքավայրի պաշարները՝ 2005թ դեկտեմբերի 29-ի թիվ 87 որոշմամբ հաստատվել են « Բնապահպանության նախարարության աշխատակազմի ՕՇՊԳ Պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի կողմից՝ Ե կարգով, 723.0հազ. մ³ քանակով: Հանքավայրի Լանջ տեղամասի հաստատված պաշարները դիտարկվել են որպես հումք՝ խճի և ավազի արտադրության համար: Հանքավայրի տեղամասերը ժամանակին շահագործվել են, հետևաբար փաստացի մնացորդային պաշարները նախագծման դրությամբ (3.0հա տեղամասում) կազմում են՝ 523 402մ³ ըստ Ե կարգի, 482.0հազ.մ³ ըստ կորզվող պաշարների քանակների: Նախագծված բացահանքի տարեկան արտադրողականությունը կազմում է՝ 21 718մ³ մարվող պաշար: Բացահանքի ծառայման ժամկետն ընդունված է 24.1 տարի:

Ջրաբերի լիթոիդային պեմզաների Լանջ տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են միջին պլիոցենի լիթոիդային պեմզաներ, ինչպես նաև ժամանակակից նստվածքներ: Օգտակար հաստվածքը իրենից ներկայացնում է պեմզային ավազի, խճի և տարաչափ բեկորների խառնուրդ, որում որում ավազային և խճային ֆրակցիաների պարունակությունը բնական վիճակում համապատասխանում է 37% և 30%: Տեղամասում լիթոիդային պեմզաների միջին հզորությունը կազմում է 221մ: Ժամանակակից նստվածքների միջին հզորությունը կազմում է 0.27մ, ներկայացված են թույլ փխրուն նյութերով՝ կավաավազներից և ավազակավերից մանրախճի և գաքարերի խառնուրդով:



Հանքավայրը բնութագրվում է բարենպաստ լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմաններով: Ինչպես մակերևույթային, այնպես էլ գրունտային ջրերի բացակայությունը հանքավայրի տարածքում պայմանավորված է լիթոիդային պեմզաների ճաքճքվածությամբ և ջրաթափանցելիությամբ, մթնոլորտային ջրերը կարող են ենթարկվել բնական դրենաժի:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով՝ առանց հորատապայթեցման աշխատանքների: Բացահանքում արդյունահանումը կատարվելու է էքսկավատոր-ավտոինքնաթափ-բուլդոզեր լեռնային համալիրի միջոցով:

Նախագծված բացահանքը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով՝

- Ամենամեծ երկարություն՝ 205մ
- Ամենամեծ լայնություն՝ 180մ
- Բացահանքի մշակման խորություն՝ մինչև 1670.0մ հորիզոն
- Մակաբացման ապարների միջին հզորություն՝ 0.27մ
- Օգտակար հանածոյի ամենամեծ հզորություն՝ 52.0մ
- Մակաբացման ապարների քանակ՝ 4450մ³

Բացահանքի աշխատանքային ռեժիմն ընդունվում է 260 օր/տարի, օրվա մեջ մեկ անգամ՝ 8 ժամ տևողությամբ հերթափոխով:

Բացահանքը ներկայումս շահագործվում է: Հետագա աշխատանքի համար կատարվելու է 1715.0մ բարձրության նիշ ունեցող հորիզոնի բացում: Նախատեսված է ավտոճանապարհի կառուցում հանքավայրի հարավ արևմտյան կողմից՝ նախկինում արդյունահանման ժամանակ կառուցված ավտոճանապարհի 1690.0մ բարձրության նիշից մինչև 1715.0մ բարձրության հորիզոն: Ավտոճանապարհի երկարությունը կկազմի 226մ: Հաջորդ՝ 1710.0մ---1670.0մ բարձրության հորիզոնները մշակվում են հենց այդ ավտոճանապարհից աստիճանաբար հորիզոնական կտրող խրամների անցումով: Բացող խրամի առավելագույն թեքությունն ընդունվել է 100.0%: Հանքաստիճանների բարձրությունն ընդունված է 5մ:

Բացահանքը մշակվում է ընդլայնական ընթացաշերտերով, միակող մշակման համակարգով, որի համար՝

- աշխատանքային հանքաստիճանի բարձրությունն ընդունված է 5մ,
- հանքաստիճանի թեքության անկյունը՝ 55 °,
- հանքակողերի թեքության անկյունը՝ 45°,
- անվտանգության առափնների լայնությունը՝ 2մ:
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը՝ 30մ:

Բացահանքից լիթոիդային պեմզայի տեղափոխումը մինչև 0.5կմ հեռավորության վրա գոյություն ունեցող ջարդող տեսակավորող կայանք, նախատեսվում է իրականացնել ավտոինքնաթափերով:

Բացահանքում առկա մակաբացման ապարների ընդհանուր ծավալը կազմում է 4450մ³, ընդլայնվող բացահանքում լցակույտի ընդհանուր ծավալը կկազմի՝ 5340մ³, զբաղեցրած մակերեսը՝ 0.12հա: Սկզբում մակաբացման ապարներն ավտոինքնաթափով կտեղափոխվեն հանքավայրի արևմտյան մասում ձևավորվող N1 արտաքին լցակույտ /որի կողի առավելագույն թեքման անկյունը կկազմի՝ 35%/: Լցակույտի ձևավորումը բուլդոզերային եղանակով է:

Շահագործման 20-րդ տարվանից սկսած մակաբացման ապարների 2350մ³ ծավալն արտաքին լցակույտից ավտոինքնաթափով կտեղափոխվի բացահանքի արևելյան մասի արդյունահանված տարածք, որտեղ բուլդոզերի օնությամբ փոխվում է, ստեղծվելով



ներքին լցակույտ: Շահագործման ավարտից հետո N1 ցակույտում մնացած մակաբացման ապարները կտեղափոխվեն հանքավայրի 1670.0մ բարձրության հորիզոն և կհարթեցվեն:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվում է արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հրապարակները, լցակույտը և ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար: Փոշենստեցման մակերեսները բացահանքում ընդհանուր կկազմեն՝ 3850մ², որի համար ջրի ծախսը կկազմի 2200լիտր: Բացահանքում ջրահեռացման միջոցառումներ չեն նախատեսվում, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ ապարներն ունեն բարձր ջրաթափանցելիություն:

Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումն իրականացվելու է շահագործման աշխատանքների ավարտից և պաշարների մարումից հետո: Այդ աշխատանքները ներառում են՝ N1 ցակույտում մնացած 2100 մ³ ծավալով մակաբացման ապարների տեղափոխում հանքավայրի 1670.0մ բարձրության հորիզոնի վրա և հարթեցում: Հարթեցումը կկատարվի հանքավայրի 24850մ² մակերեսում, կհարթեցվի նաև արդյունաբերական հրապարակը և ավտոճանապարհները: Ռեկուլտիվացիայի ենթակա մշակված տարածքը ընդհանուր կկազմի 2.62 հա, իսկ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ծախսերի խոշորացված նախահաշիվը գնահատվել է՝ 1856.4 հազ.դրամ:

Հանքավայրի շահագործման ընթացքում և շահագործողական աշխատանքների ավարտից հետո շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կանխելու, կամ նվազեցնելու նպատակով նախագծում նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ, այդ թվում՝

- սարքավորումները թույլատրել աշխատանքի միայն դրանց արտանետման գազերում վնասակար նյութերի թույլատրելի պարունակություն ապահովելու դեպքում, որի համար որոշ մեքենաների վրա դրվում են զտիչ սարքեր,
- փոշեառաջացման կանխման նպատակով՝ աշխատանքային հրապարակների, հանքախորշերի, լցակույտերի, ավտոճանապարհների պարբերաբար ջրում՝ տարվա չոր և շոգ եղանակներին,
- նավթամթերքների պահեստավորում բացահանքի արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), ապահովելով թափված նավթամթերքների հոսքը դեպի հավաքող բետոնապատված փոսը:

Մեքենաներում օգտագործված, փոփոխված յուղերը և քսայուղերը հավաքվելու են առանձին տարաների մեջ և ուղարկվում վերամշակման: Կենցաղային աղբը և շահագործման ընթացքում առաջացող թափոնները պետք է սահմանված կարգով հեռացվեն՝ համապատասխան մարմինների հետ համաձայնեցված:

Հաշվետվությունում ներկայացվել են միջոցառումներ, որոնք ուղղված են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների և հնարավոր վթարային իրավիճակների դեպքում ազդեցությունների կանխարգելմանը, կամ նվազեցմանը:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ընկերությունը շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության կանխարգելման և շրջակա միջավայրի բաղադրիչների /օդ, ջուր, հող/ որակի վերահսկողության համար նախատեսում է մշտադիտարկումներ, որոնց գործողությունների ծախսերը նախնական գնահատվել են 450հազար դրամ: Թափոնների ճիշտ կառավարման համար ևս նախատեսվել են ծախսեր:

Նախնական գնահատման հայտի և հաշվետվության փորձաքննության փուլերում հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Ջրաբեր գյուղում անցկացվել են հանրային քննարկումներ: Քննարկումների ընթացքում ծրագրի

իրականացումը հանրության կողմից արժանացել է հավանության այն նկատառումներով, որ հետագայում հանքավայրի շահագործումը որոշակիորեն կարող է նպաստել համայնքի, կամ բնակավայրի սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ ստեղծելով լրացուցիչ աշխատանքային ռեսուրսներ:

Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները, պետք է նշել, որ հանքավայրի շահագործման ընթացքում բնապահպանական տեսանկյունից վնասակար, թույլատրելի նորմերը գերազանցող արտանետումներ և արտահոսքեր չեն առաջանա: Նախագծում նախատեսված բնապահպանական միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա նվազեցնելու, կամ մեղմելու ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև վերահսկելու նախատեսվող աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները:

Փորձաքննական պահանջներ

1. Հանքարդյունահանման աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների նկատմամբ մշտադիտարկումներ, կազմել հետնախագծային միջոցառումների իրականացման և վերլուծության հաշվետվություն, ինչը պետք է պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը:

2. Ջրօգտագործումը, շահագործման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների տեղադրումը և հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Միկմետալ» ՓԲԸ կողմից ներկայացված ՀՀ Կոտայքի մարզի Ջրաբերի լիթոիդային պեմզաների Լանջ տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Հ. Մկրտչյան